

եկեալ գրեաց և ուսոյց՝ բազմաց ։ Այս վիստական տողերն էլ ընդգծում են ամենից առաջ այն, որ նա իր գարաշը չանում հաչակուել է ո՛չ միայն իր գիտութեամբ, այլև իր երաժշտական գեղեցիկ յատկանիցներով։ Նոյնպէս նրա առաջնորդութեան ժամանակ Հաղաքարձինի պատմական գանքը պայցառացել է նոր փայլ ու բովանդակութիւն է տացել։

Մի հաճագամնք անժխտելի է, որ միջնադարեան հայ եկեղեցական երաժշտութեան մէջ ո՛չ մի երաժշտագէտ այնքան մեծ հեղինակութիւն և համբաւ չի վայելի, ո՛րքան Տարօնեցին։ Նա 12րդ դարի ո՛չ միայն գիտական և լաւագոյն հոգեռականներից մէկն է, այլև իր ժամանակի տաղանդաւոր երգահանն է, որ յայտնաբերել է ու գործադրել հայ երաժշտական խազերը՝ նշանագրերը, և դրել է այն ամուր պատուանդանը, որի վրայ հետագայում կառուցուել և զարգացել է հայ եկեղեցական երաժշտութիւնը։ Նրա այդ գերը հայ երաժշտութեան պատմութեան ամենաագեղեցիկ մի էջն է կազմում։

Տարօնեցին առաջին արուեստագէտն է, որ 12րդ դարում ձայնագրել, խազա, որի և զրի է առել շարականները հոգեւոր երգեր և աւանդ է թողել ապագայ սերունդներին։

Իր ստեղծագործութիւնների մէջ նա երեան է զալիս իր ինքնատիպ արուեստով և նորանոր որոնումներով, հանդէս է զաւլիս որպէս վարպետ և գեղարուեստագէտերաժիշտ, որ փայլել է իր ուրոյն երաժշտութեամբ և առանձնայատուկ ոճով, բազմերանգ ոլթմով և գեղարուեստական բարձր մշակոյթով։ Իր երաժշտական արուեստով նա ժամանակակիցների մէջ մեծ հոչակ է վայելել։

Նոյնպէս նա իր գարաշը անում յայտնի է դարձել որպէս վաստակաւոր մանկավարժ։ Նա ո՛չ միայն խազերը բերել է և ի կողման յարեւելիցն, այլև երաժշտական նշանագրերը շատերին սովորեցրել է և նրանց հոգիներում վառ պահել երաժշտական արուեստի սէրը։

Հայ եկեղեցական երաժշտութեան մէջ Տարօնեցու ինքնատիպ արտայայտութիւններից մին նրա ստեղծագործական անմիջականութիւնն է ու խորութիւնը։ Նրա երգերը, միջնադարեան հոգեւոր երաժշտութեան համար, իբր նոր երեւոյթ, անպայման նշանակալից են և ուշագրութեան

ԵԿԵՂԵՑԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՅԱԿՈԲ ԶՈՒԳԱՑԵՑԻ

ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ

Աւետիքի 1955 Հոկտեմբեր-Դեկտեմբերի միացեալ թիւն մէջ, զոր վերջերս ստացանք, Գեր. Հ. Համզ. Առկեան կարճ յօդուած մը ունի, «Օգոստոս ամսուան ո՞ր օրը մեռած է Յակոբ Դ. Զուգացիցի Կաթողիկոսը» վերնագրով։ Այդ յօդուածին մէջ սպրզած է Կորենոր սխալ մը զոր հարկ կը սեպենք մատնանչել։

Նախ մէջ բերենք ակնարկուած հատուածը։

« . . . Իսկ յաւրան Կիւրակէի թէ որքան դառնութիւն հասուցին յայնմ հիւանդութեան շարածճիկք ոմանք (հաւատոյ դաւանուրեան խնդիրը կ'ակնարկուի) . . . Բայց յերկրորդում աւուր Օգոստոսի ամսոյ յերկուշաբաժոջ յերկու ժամու աւանդեաց զքաղցր հոգին առ Տէր . . . (Պաղարեան Ն. Եպ. Մայր Յուր. Զեռագրաց Ս. Յակոբեանց, Բ., Երուսաղէմ, 1953, էջ 163): Արդ, այս Գիրին համաձայն Յակոբ Զուգացիցի մինչև Յուլիս 27^(*) Հինգշաբթի, Խոսկիւտար է, բայց նախորդ օրը Զորիք շարթի ծանրապէս կը հիւանդանայ և նա

(*) Պէտք էր ըլլար 29։

արժանի։ Անժխտելի է և այն, որ 12րդ դարի հայ եկեղեցական երաժշտութեան մէջ Տարօնեցին, որպէս ուրոյն և ինքնատիպ ստեղծագործող, որպէս եկեղեցական երգերի յօրինող և ձեւակերպող, զրաւուծ է խոշորագոյն ու պատուաւոր աեղ։ Նրա բարձր ստեղծագործական տաղանդի մի նմուշն է պատարագի զգեստաւորման, պատարագամուտին, երգուող և կորհուրդ խորին, անհաս, անսկիզբնու շարականը, որ հոգեւոր երգերի մէջ համարւում է ընտիր մի շարական։

ԱՐԱՐ ԵՐԵՄԵԼՆԻ
(Շարունակելի 6)

բաթ օրը Ատամալու կը փոխադրուիր Հսո կիրակի օրը հաւասոյ դաւանուրին կու Տալ և Երկուշաբթի — արդի ժամացոյցով կամ ժամով առաւօտեան ժամը ութին — իր հոգին կ'աւանդէ . . . » (Էջ 146):

Վերսոգրեալ տողերը կարդացողը այնպէս պիսի կարծէ թէ մեր հրատարակած Յուցակին մէջ կը դանուի Գիր մը, ուր կը պատամուին Յակոբ Զուզայիցիի մահուան պարագաները, յիշատակելով նաև գոյութիւնը իր կողմէն տրուած և Հաւատոյ դաւանութեանք մը: Թիւրիմացութիւն ստեղծելու կոչուած տողերը մենք ընդգծեցինք յատկապէս, ցոյց տալու համար անոնց հիմնովին սխալ և բոլորովին անտեղի ըլւալը:

Եղիսաբէր Կաթողիկոսին ուղղուած այդ պիրուին համաձաւյն Յակոբ Կթզ. Զուզայիցի վերջին օրերուն պատկերը կը գծուի սասպէս:

1680, Յուլիս 28 Դշ. — Ան կը գտնուի Խւսկիւտար և օդին ցրտութենէն հրանդահանով կը բանուի սաստիկ ջերմէ:

Յլու. 31 Շբ. — Կը փոխադրուիր Ատամալու և նոյն օրը երեկոյին կ'արձակէ բոլոր անոնք որ բանազրուած էին իրմէ:

Օգոստոս 1 կիր. — «Իսկ յաւըն կիրակէի թէ ո'քան դառնութիւն հասուցին յայնմ հրանդութեան չարաճակք ոմանք, զորս յատոյ մը ըստ միոջէ պատմելոց եմք» (Յուզոկ, Էջ 164):

Օգոտ. 2 Բշ. — «Բայց յերկորդում աւուր օգոստոսի ամսոյ յերկուշարաթօջ յերկու ժամու աւանդեաց զքաղցր հոգին առ Տէր, մինչ անկեալ կայր ի վերայ բազկաց մերոց» (նոյն տեղ):

Արդ կիրակի օրը ի'նչ բանի համար մահմերձ Կաթողիկոսին այնքան դառնութիւն տուին կարգ մը չարաճաճիներ: Բայտ Փիր. Հ. Համզ. Ասկեանի մեկնութեան, «հաւատոյ դաւանութեան խնդիրը Կ'ակնարկուին»: Բայց ինչո՞ւ այս ձրի մեկնութիւնը երբ նամակացիրները կ'ըսեն թէ քիչ յետոյ պիտի պատմեն մի առ մի: Եւ արդարե իրենց խստումին համաձայն աւելի վարը կու տան հարկ եղած լուսարանութիւնը, զրելով: «Իսկ յաւուր կիրակէին, զոր ի վա-

զիւն աւանդելոց էր զքաղցր հոգին, յօրգորեալ զտաճիկ դաւէճիսն, եկեալ ի վերայ սաստիկ հիւանդութեանն, կամէին մահմօք վերցնել ի մէհկէմէն: Եւ թէ զինչ չարիք զործեաց յայնմ ժամու՝ ընդ զրով ոչ լինի արկանել . . . » (Յուզոկ, Էջ 165ա): Բայտ նամակագիրներուն՝ նեղութիւն պատճառողները անզգամ արարտապահնջներ են, որոնք դատ բացած են Զուզայիցիին զէմ և կ'ուզին զինքը այդ հրւանդագին վիճակին մէջ մահմօք միասին վերցնել և տանիլ դատարան: Հսո ոչ դաւանանքի հարց կայ և ոչ ալ դաւանութեան զիրի խօսք, ինչպէս կ'երեւակայէ Գիր. յօդաւագիրը:

Յակոբ Կթզ. Զուզայիցիի վերագրուած և Հաւատոյ դաւանութեան յերիւրածոյ և կեղակարծ այդ զիրին խնդիրը վաղուց լուսաբանուած է Մաղաքիս Արք. Յրմանիանի հմատ զրչով, այսպէս:

«Արդ ամէն հետաքնին միտք կը նայ մտածել, թէ ինչ արժէք կրնայ ունենալ 82 տարեկան ծերունիի նոյն իսկ մահուած վայրկեանին տուած յայտարարութիւնը, որ 8 ամիս շարունակ Լատին արեգաներու հետալ շփման մէջ գտնուելով, և երկու ամիսէ ի վեր հրւանդացած ալ ըլլալով, չէ ուզած և չէ մտածած այդպիսի յայտարարութիւն մը տալ, թէ պէտև անշատ իրեն մօսեցող հոսմէականներ այդպիսի գրութիւն մը ձեռք անցընելու ջանք ունեցած են: Նոյնիսկ գրուածին պարունակութիւնն ու ոճն ալ, որուն մէջ կը միշուին 82 տարեկան և 4 ամսական ըլլալը, 26 տարի հայրապետութիւն վարած ըլլալը, Կասրարինիի և Ճիլիի (§ 1792) ներկայ ըլլալը, և ուրիշ շատ մը երկրորդական պարագաներ, յայտնի կը ցուցնեն թէ ծերունի հոգեվարքի գրելուն կամ թելագրելուն կամ մտածելուն յարմար գրութիւն չէ, այլ ուրիշներէ պատրաստուած և նեղ վայրկենի մը մէջ իր թէ ստորագրել տրուած զիր մընէ: . . . Հետեւարար երբեք արժէք և նշանակութիւն ունեցող գրուած մը չ[ի] կրնար ըսուիլ այդ զիրը . . . » (Ազգապատում, Էջ 2616):

Այս ճշգումը հարկ տեսանք կատարել, յուսաւով որ օգտակար կ'ըլլայ այն ճշգութիւն և ճշմարտութիւն սիրող մերազնեայ զրիշներուն:

Ե. ԵՊԱ. ԾՈՎԱԿԱԾՆ